ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 4

ԵՊՀ ԻՄ տնտեսագիտության ֆակուլտետի գիտխորհրդի նիստի

04.02.2017թ. ք. Իջևան

Նախագահ Ն. Խուդավերդյան /դեկան/
Քարտուղար Ա. Սարիբեկյան /քարտուղար/
Խորհրդի նիստին մասնակցում էին նախագահ Ն. Խուդավերդյանը, քարտուղար Ա. Սարիբեկյանը, Հ. Մարզպանյանը, Գ. Հովհաննիսյանը, Ա. Պոտոսյանը, Պ Ասիլբեկյանը, Գ. Ավետիսյանը, Գ. Սիրոյանը, Հ. Ազիզյանը, Մ. Սարուխանյանը, Լ. Մելիքջանյանը, Վ. Առաքելյանը, ուս. խորհրդի նախագահ Հ. Քարտաշյանը, ՈՒԳԸ նախագահ Ս. Հակոբյանը, Ս. Սաֆարյանը, Ն. Մխիթարյանը:

Ֆակուլտետի խորհրդի նախագահ Ն. Խուդավերդյանը բացելով ֆակուլտետի խորհրդի նիստը հայտարարեց քվեակազմի առկայության մասին և ներկայացրեց օրակարգը:

Օրակարգ

1. 2016 - 17 ուսումնական տարվա առաջին կիսամյակի քննաշրջանի ամփոփման մասին:
   /Զեկ. Ն. Խուդավերդյան/
2. 2016 - 17 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի նախապատրաստական աշխատանքների (դեկանատի և ամբիոնների) մասին :
   /Զեկ. Ն. Խուդավերդյան/
3. Ընթացիկ հարցեր:

Ֆակուլտետի խորհրդի անդամների կողմից բաց քվեարկությամբ միաձայն ընդունվեց նիստի օրակարգը:

1. Լսեցին - Ֆակուլտետի ըստ մասնագիտությունների 2016-17 ուս. տարվա առաջին կիսամյակի քննարրջանի արդյունքների ամփոփման մասին:

Ն. Խուդավերդյանը նշեց, որ դեկանատը ամենայն մանրամասնությամբ ուսումնասիրել և վեր է լուծել 2016-17 ուս. տարվա առաջին կիսամյակի քննաշրջանի արդյունքները: Ֆակուլտետում քննաշրջանը կազմակերպվել է 144 (անվճար՝ 36, վճարովի՝ 108) ուսանողների համար, այդ թվում՝ «Տնտեսագիտության տեսություն» մասնագիտության՝ 95 (անվճար՝ 21, վճարովի՝ 74) ուսանողի և

«Սերվիս» մասնագիտության՝ 49 (անվճար՝ 15, վճարովի՝ 34) ուսանողի համար: Քննությունները դրական են հանձնել 103 ուսանող, որից գերազանց առաջադիմություն են ցուցաբերել (ապահովել) բարձր կուրսերից 10 ուսանող (տնտեսագիտության տեսություն՝4, սերվիս՝ 6), գերազանց և լավ՝38, խառը՝43, միայն բավարար՝12: Հետևաբար պարտք ունեն 41 ուսանող:Ֆակուլտետի ընդհանուր առաջադիմությունը կազմել է 72%, այստեղ նշեմ նաև, որ անվճար ուսուցման համակարգում առաջադիմությունը կազմել է 97%, վճարովի՝63% Ստորև ներկայացնեմ առաջադիմությունն ըստ մասնագիտությունների և կուրսերի.

Տնտեսագիտություն

Ի կուրս

Քննաշրջանին մասնակցել են թվով 21 /5 անվճար և 16 վճարովի/ ուսանողներ, որից դրական են հանձնել 16-ը, որից 5-ը անվճար և 11-ը վճարովի: Առաջադիմությունը կազմել է 76% /անվճար՝ 100% և վճարովիներինը՝ 69%/: Հիմնական պարտքերը գրանցվել են «Մաթեմատիկական անալիզ-1» դասընթացից, որի առաջադիմությունը կազմել է 76%:

Տնտեսագիտության տեսություն

II կուրս

Քննաշրջանին մասնակցել են թվով 24 /6 անվճար և 18 վճարովի/ ուսանողներ, որից դրական են հանձնել 11-ը, որից 5-ը անվճար և 6-ը վճարովի: Առաջադիմությունը կազմել է 46% /անվճար՝ 83% և վճարովիներինը՝ 33%/: Առաջադիմության ցածր արդյունքի հիմնական պատճառ է եղել «Ազգային տնտեսություն» և «Գործոյթների հետազոտման մաթ. մեթոդներ» դասընթացներից գրանցած մեծ թվով «անբավարար» գնահատականները, որոնց առաջադիմությունը համապատասխանաբար կազմել է՝ 58% և 63%:

III կուրս

Քննաշրջանին մասնակցել են 29 /5 անվճար և 24 վճարովի/ ուսանողներ, որից դրական են հանձնել 18-ը, որից 5-ը անվճար և 13-ը վճարովի: Առաջադիմությունը կազմել է 62% /անվճար՝ 100% և վճարովիներինը՝ 54%/: Կուրսի հիմնական պարտքերը գրանցվել են «Ֆինանսական շուկաներ » և «Տնտեսագիտ. մտքի պատմություն» առարկաներից, որոնց առաջադիմությունը համապատասխանաբար կազմել է 60% և 66%:

IV կուրս

Քննաշրջանին մասնակցել են 21 /5 անվճար և 16 վճարովի/ ուսանողներ, որից դրական են հանձնել 17-ը, որից 5-ը անվճար և 12-ը վճարովի: Առաջադիմությունը կազմել է 81% /անվճար՝ 100% և վճարովիներինը՝ 75%/:

Այսպիսով, տվյալ մասնագիտությունից քննաշրջանին մասնակցել են 95 ուսանողներ, որից դրական է հանձնել 62 ուսանող, պարտք ունեն 33 ուսանող: Մասնագիտության առաջադիմությունը կազմել է 65%:

«Սերվիս»

I կուրս

Քննաշրջանին մասնակցել են թվով 15 /3 անվճար և 12 վճարովի/ ուսանողներ, որից դրական են հանձնել 12-ը, որից 3-ը անվճար և 9-ը վճարովի: Առաջադիմությունը կազմել է 80% /անվճար՝ 100% և վճարովիներինը՝ 75%/:

II կուրս

Քննաշրջանին մասնակցել են 10 /4 անվճար և 6 վճարովի/ ուսանողների, որից դրական են հանձնել 8-ը, որից 4-ը անվճար և 4-ը վճարովի: Առաջադիմությունը կազմել է 80% /անվճար՝ 100% և վճարովիներինը՝ 67%/:

III կուրս

Քննաշրջանին մասնակցել են 10 /4 անվճար և 6 վճարովի/ ուսանողներ, որից դրական են հանձնել 8-ը, որից 4-ը անվճար և 4-ը վճարովի: Առաջադիմությունը կազմել է 80% /անվճար՝ 100% և վճարովիներինը՝ 67%/:

IV կուրս

Քննաշրջանին մասնակցել են 14 /4 անվճար և 10 վճարովի/ ուսանողներ, որից դրական են հանձնել 13-ը, որից 4-ը անվճար և 9-ը վճարովի: Առաջադիմությունը կազմել է 93% /անվճար՝ 100% և վճարովիներինը՝ 90%/:

Այսպիսով, տվյալ մասնագիտությունից քննաշրջանին մասնակցել են 49 ուսանողներ, որից դրական է հանձնել 41 ուսանողներ, պարտք ունեն 8 ուսանող: Մասնա գիտության առաջադիմությունը կազմել է 84%:

Եվ այսպիսով, ֆակուլտետում գրանցվել է 72% առաջադիմություն:

Արտահայտվեցին - «Տնտեսագիտության տեսություն» մասնագիտության կրթական ծրագրի ղեկավար Գ. Ավետիսյանը և «Սերվիս» մասնագիտության կրթական ծրագրի ղեկավար Պ. Ասիլբեկյանը:

Նրանք առաջարկեցին ֆակուլտետի ըստ մասնագտությունների 2016–17 ուս. տարվա առաջին կիսամյակի քննաշրջանի արդյունքները համարել բավարար:

Որոշեցին - Ֆակուլտետի ըստ մասնագիտությունների 2016–17 ուս. տարվա առաջին կիսամյակի քննաշրջանի արդյունքները համարել բավարար:

2.Լսեցին - 2016 - 17 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի նախապատրաստական աշխատանքների մասին :

Ն. Խուդավերդյանը նշեց, որ դեկանատի կողմից կազմված են երկրորդ կիսամյակի դասացուցակը, որը ամբողջովին համապատասխանում է աշխատանքային ուսումնական պլաններին, ամբիոնային և անհատական ծանրաբեռնվածություններին: Երկրորդ կիսամյակի ուսումնական գործընթացն իրականացնելու համար անհրաժեշտ դասախոսական կազմն ամբողջությամբ համալրված է:

Երկրորդ կիսամյակի արդյունավետ կազմակերպման հարցում չկա որևէ խոչընդոտ, ինչ վերաբերում է կիսամյակի առարկաների արդյունավետ (պահանջված կերպ) դասավանդման հարցին կա որոշակի բացեր: Ոչ բոլոր առարկաների պորտֆոլիոններն են ներկայացված, ուստի դեկանատը պահանջում է ամբիոններից մեկ շաբաթյա ընթացքում լրացնել այդ բացը:

Արտահայտվեցին - Գ. Միրոյանը, Հ. Ազիզյանը

Որոշեցին - հաստատել ֆակուլտետի ըստ մասնագիտությունների 2016 -2017 ուս. տարվա դասատախտակները:

2016-2017 ուս. տարվա երկրորդ կիսամյակի նախապատրաստական աշխատանքների ընթացքը գնահատել բավարար:

3.Լսեցին - ընթացիկ հարցեր

3.1. 2016 - 2017 ուս. տարվա երկրորդ կիսամյակի անվանական կրթաթոշակների հավակնորդ ֆակուլտետի ուսանողների թեկնածության քննարկման մասին

/Զեկ Ն. Խուդավերդյան/

Նա նշեց, որ ֆակուլտետի կողմից իրականացված համապատասխան ուսումնասիրությունները հանգեցրին նրան, որ ֆակուլտետից «Շավարշ Մարգարյան» անվանական կրթաթոշակի կարող է ներկայացվել ֆակուլտետի ՈՒԽ -ի նախագահ «Տնտեսագիտության տեսություն» մասնագիտության երրորդ կուրսի ուսանողուհի Հասմիկ Քարտաշյանը, «Սերվիս» մասնագիտության երրորդ կուրսի ուսանողուհի Մարգարիտա Խառատյանը՝ «Մոնթե Մելքոնյան» անվանական կրթաթոշակի:

Արտահայտվեցին - Պ. Ասիլբեկյանը, Գ. Ավետիսյանը

Արտահայտվողները նշեցին, որ «Շավարշ Մարգարյան» անվանական կրթաթոշակի ներկայացվող ուսանողուհի Հասմիկ Քարտաշյանը վերջին չորս

կիսամյակներում ցուցաբերել է գերազանց առաջադիմություն, միաժամանակ նա ակտիվորեն մասնակցում է ֆակուլտետում կազմակերպվող բոլոր ուսանողական և գիտական գործընթացներին և աչքի է ընկնում օրինակելի վարքագծով, իսկ «Մոնթե Մելքոնյան» անվանական կրթաթոշակի ներկայացվող ուսանողուհի Մարգարիտա Խառատյանը երկու անընդմեջ կիսամյակ ցուցաբերել է գերազանց առաջադիմություն:

Որոշեցին - Հաստատել 2016-2017 ուս. տարվա երկրորդ կիսամյակի «Շավարշ Մարգարյան» և «Մոնթե Մելքոնյան» անվանական կրթաթոշակի հավակնորդներ ֆակուլտետի ուսանողուհիներ Հասմիկ Քարտաշյանի և Մարգարիտա Խառատյանի թեկնածությունները և ներկայացնել տնօրինությանը:

Գիտխորհրդի նախագահ *Ն. Խուդավերդյան*

Քարտուղար *Ա. Սարիբեկյանը*